

**ԺԴ.00.02 - ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ, ՀՅՈՒՍՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԲՋՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՂՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ. Հենաշարժիչ ապարատ. Գանգի ֆիլո - և օնտոգենեզը, ուղեղային և դիմային գանգի ոսկրեր: Գանգի արտաքին և ներքին հիմեր, հաղորդակցումները: Ակնակապիճ, քթի խոռոչ, պատերը, բացվածքները, հաղորդակցումները: Ոսկրերի միացումների ընդհանուր անատոմիան, միացումների ձևերը: Միացումների դասակարգումը և կառուցվածքը: Ֆիբրոզ միացումների՝ սինդեսմոզների, սինխոնդրոզների և սինովյալ միացումների (հոդերի) մասնավոր անատոմիա: Հոդերի կառուցվածքը, դասակարգումը: Մկանների ընդհանուր անատոմիան: Սոմատիկ և ընդերային մկաններ: Մկանը որպես օրգան: Գլխի, պարանոցի, վերին և ստորին վերջույթների մկաններ: Պարանոցի շրջանները, տեղագրությունը, ստորին վերջույթի տեղագրությունը:

Ներքին օրգաններ (ընդերաբանություն). Մարսողական համակարգի օրգանները, պատի կառուցվածքը, դեմքի զարգացումը: Որովայնի խոռոչի օրգանների սկելետոտոպիան, սինտոպիան, անոթավորման աղբյուրները և նյարդավորումը: Որովայնամզի և օրգանների փոխհարաբերությունը: Որովայնամզի հարկերը, նրանց պարունակությունները: Շնչական համակարգի օրգանները, տեղագրությունը, կառուցվածքը, շնչառական ուղիներ, թոքեր: Կոկորդը որպես ծայնային ապարատ: Թոքեր, տեղադրությունը, կառուցվածքը: Կրծքամզի և կրծքամզային ծոցերի տեղագրությունը, անատոմիան: Միզային օրգանները, նրանց զարգացումը, տեղագրությունը, կառուցվածքը: Առնչությունը որովայնամզին, անոթավորման աղբյուրները, նյարդավորումը, շրջանային ավշահանգույցները: Սեռական օրգանները, նրանց կառուցվածքը և տեղագրությունը: Առնչությունը որովայնամզին, անոթավորումը, նյարդավորումը, շրջանային ավշահանգույցները:

Սիրտ անոթային համակարգ. Սիրտ. տեղագրությունը, խոռոչները, պատի կառուցվածքը, անոթավորումը, նյարդավորումը: Զարկերակների և երակ-

ների ընդհանուր անատոմիան, նրանց պատերի կառուցվածքը, նրանց շրջանային անատոմոնորֆոնկցիոնալ առանձնահատկությունները: Միկրոցիրկուլյատոր հունը, մազանոթներ: Զարկերակային համակարգ: Արտաքին և ներքին քնային զարկերակներ, անոթավորման շրջանները: Կրծքային և որովայնային աորտա, ընդերային և առպատային ճյուղերը, անոթավորման շրջանները: Վերին, ստորին սիներակների համակարգերը: Դռներակի համակարգ. տեղադրությունը, ակունքները:

Ավշային համակարգ. Ավշային համակարգի ընդհանուր անատոմիան և առանձին օղակների կառուցվածքը ու ֆունկցիան: Ավշային մազանոթներ, անոթներ: Ավշի հոսքի ուղիները օրգաններից, ավշային հանգույցները, նրանց տեղադրությունը, դասակարգումը:

Կրծքային, ավշային ծորանի և աջ ավշային ծորանի ֆունկցիոնալ անատոմիան: Ռեգիոնալ ավշախմբեր (անութային, աճուկային):

Կենտրոնական նյարդային համակարգ. Ողնուղեղ, պատյանները, կառուցվածքը: Հաղորդչական զգացող և շարժիչ ուղիներ, տեղագրությունը ողնուղեղում և գլխուղեղի տարբեր մասերում: Երկարավուն ուղեղի, կամրջի արտաքին և ներքին կառուցվածքը: Գլխուղեղի կիսագնդերում գորշ և սպիտակ նյութերի փոխհարաբերությունը, հիմային կորիզներ, ներքին պատիճ, տեղադրությունը, նշանակությունը: Միջային և կողմնային ժապավեններ, տեղադրությունը գլխուղեղի տարբեր հատվածներում:

Ծայրամասային նյարդային համակարգ. Ողնուղեղային և գանգային նյարդերի ընդհանուր անատոմիա: Ողնուղեղային նյարդերի առաջային և հետին ճյուղերը: Հյուսակների կազմավորման առանձնահատկությունները, բազկային և սրբոսկրային հյուսակներ, ճյուղերը և նյարդավորման շրջանները: Գանգային V, VII, X զույգ նյարդեր, նրանց հիմնական ճյուղերը, տեղադրությունը և նյարդավորման շրջանները:

Վեգետատիվ նյարդային համակարգ. Վեգետատիվ նյարդային համակարգի ընդհանուր անատոմիա: Վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ և պարասիմպաթիկ բաժինների կենտրոնները: Վեգետատիվ

ռեֆլեկտոր աղեղ: Վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժին՝ սպիտակ և գորշ կապակցող ճյուղեր, սիմպաթիկ ցողուն, պարանոցային վերին հանգույց: Սիմպաթիկ հյուսակներ. արևային հյուսակ, տեղագրությունը, կազմավորումը, նյարդավորման շրջանները:

Վեգետատիվ նյարդային համակարգի պարասիմպաթիկ բաժին, կենտրոնական և ծայրամասային բաժինները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սապին Մ.Ռ. Մարդու անատոմիա, I հատոր, 1994թ.
2. Պրիվես Մ.Գ., Լիսենկով Ն.Կ., Բուշկովիչ Վ.Ի. Մարդու անատոմիա, 1974թ.
3. Սինելնիկով Ռ.Դ. Մարդու անատոմիայի ատլաս, 4 հատոր, 1996թ.
4. Նետեր Ֆ. Մարդու անատոմիայի ատլաս 5 հրատարակություն, 2011թ.
5. М. Р. Сапин, Г. Л. Билич. Нормальная анатомия человека, Учебник в 2кн, МИА Москва 2010
6. М. Р. Сапин, Д. Г. Никитюк. В. Н. Николенко, С. В. Чава, Учебник в 2 томах, Москва 2014.

ԲԶՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. Օրգանոիդներ /թաղանթային և ոչ թաղանթային/: Բջջի հենաշարժիչ կառուցվածքները: Բջջակմախք: Ներառուկներ: Բջջի կորիզի կառուցվածքը: Բջիջների վերարտադրում, բջջային ցիկլ:

ՍԱՂՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. Սաղմնաբանության հիմնական դրույթները: Պրոգենեզ: Արական և իգական սեռական բջիջների զարգացում: Էմբրիոգենեզ: Բեղմնավորում: Տրոհում: Գաստրուլյացիա: Արտասաղմնային օրգաններ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՅՈՒՍՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. Շարակցական հյուսվածք. Փուխր շարակցական հյուսվածք: Մեզենքիմա: Արյուն: Խիտ թելակազմ ձևակերպված և չձևակերպված շարակցական հյուսվածք: Հատուկ բնույթի շարակցական հյուսվածքներ: Աճառային հյուսվածք: Դասակարգում, զարգացում: Խոնդրոգենեզ: Ոսկրային հյուսվածք: Կոպիտ-թելակազմ և թիթեղակազմ ոսկրային հյուսվածք: Ուղղակի և անուղղակի օստեոհիստոգենեզ:

Մկանային հյուսվածք. Հարթ մկանային հյուսվածք: Միջաձիգ-գոլավոր մկանային հյուսվածք: Սրտամկան: Մկանը որպես օրգան: **Նյարդային հյուսվածք.** Նյարդային հյուսվածք-նյարդային բջիջներ, նեյրոգլիա: Նյարդային հյուսվածքի զարգացում: Նյարդաթելեր: Նյարդային վերջավորություններ: Միջնեյրոնային սինապսներ: **Էպիթելային հյուսվածք.** Դասակարգում, զարգացում: Ծածկույթային էպիթել: Գեղձային էպիթել: Գեղձեր:

ՄԱՍՆԱՎՈՐ ՀՅՈՒՍՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարսողական համակարգ. Բերանի խոռոչ: Լեզու: Նշիկներ: Մորֆոֆունկցիոնալ բնութագրում: Ատամ, ատամի զարգացում: Կերակրափող: Ստամոքս: Զարգացումը, կառուցվածքը: Ստամոքսի ֆունդալ և պիլորիկ բաժին: Աղիներ: Բարակ աղի, հաստ աղի, որդանման ելուն: Լյարդ: Զարգացումը, կառուցվածքը: Լյարդային բլթակներ, հեպատոցիտներ, անոթավորում: Ենթաստամոքսային գեղձ: Զարգացումը, կառուցվածքը: Գեղձի էկզոկրին և էնդոկրին բաժինները: Թքագեղձերի կառուցվածքը: Դասակարգում, զարգացում: Հարականջային թքագեղձ: Սեկրետոր բաժնի կարուցվածքը, արտատար ծորաններ: Ենթաձնոտային և ենթալեզվային գեղձեր:

Արտաթորության համակարգ. Երիկամներ: Անոթավորումը: Նեֆրոնի հիստոլոգիան: Երիկամի ներզատիչ համակարգ: Միզատար ուղիներ. միզաձորան, միզապարկ և միզուկ:

Արական սեռական համակարգ. Ամորձի: Սպերմատոգենեզ: Սերմնատար ուղիներ: Արական սեռական համակարգի գեղձեր, շագանակագեղձ: Զարգացումը, մորֆոֆունկցիոնալ բնութագրում: Տարիքային փոփոխություններ:

Իգական սեռական համակարգ. Ձվարաններ.զարգացում, կառուցվածքը, գեներատիվ ֆունկցիա: Օվոգենեզ: Օվուլյացիա: Ներզատիչ ֆունկցիաներ: Արգանդի փողեր, արգանդ: Զարգացումը, կառուցվածքը, տարիքային փոփոխությունները: Սեռական ցիկլ. հետդաշտանային շրջան, նախադաշտանային շրջան: Իգական սեռական համակարգի հորմոնալ կարգավորումը: Կաթնագեղձեր:

Նյարդային համակարգ. Ողնուղեղ. Ջարգացումը: Կառուցվածքը. գորշ և սպիտակ նյութ: Զգացող հանգույցներ: Ուղեղիկ: Նրա կեղևի կառուցվածքը, գլխան: Աֆերենտ և էֆերենտ նյարդաթելերը: Մեծ կիսագնդերի կեղևի ցիտոարխիտեկտոնիկա և միելոարխիտեկտոնիկա: Վեգետատիվ նյարդային համակարգ: Պարավերտեբրալ, պրեվերտեբրալ հանգույցներ: Ներպատային հյուսակներ: Սոմատիկ և վեգետատիվ ռեֆլեկտոր աղեղ:

Զգայարաններ. Զգայարանների կառուցվածքը, դասակարգումը, զարգացումը: Տեսողության օրգան: Ակնագնդի կառուցվածքը, աչքի ակոմոդացիոն և լուսաբեկիչ ապարատները: Աչքի ընկալիչ ապարատը: Հոտառական օրգան: Լսողության օրգան: Արտաքին, միջին և ներքին ականջ: Պարուրած օրգանի կառուցվածքը: Հավասարակշռության օրգան: Թաղանթային լաբիրինթի անդաստակային մասը: Համի օրգան:

Ներզատիչ համակարգ. Կառուցվածքը, դասակարգումը, զարգացումը: Հիպոթալամուս, հիպոֆիզ: Հիպոթալամո-ադենոհիպոֆիզար արյան մատակարարում: Տարիքային փոփոխություններ: Էպիֆիզ:

Ծայրամասային ներզատիչ գեղձեր: Կառուցվածքը, դասակարգումը, զարգացումը: Վահանագեղձ: Հարվահանագեղձ: Տարիքային փոփոխություններ: Մակերիկամներ: Զարգացումը: Կեղևային և միջուկային նյութը:

Մենավոր հորմոն արտադրող քջիջներ, APUD- համակարգ:

Սիրտ-անոթային համակարգ. Կառուցվածքը, դասակարգումը, զարգացումը: Զարկերակներ, երակներ: Միկրոշրջանառու հուն: Ավշային անոթներ: Սիրտ: Զարգացումը, կառուցվածքը:

Շնչառական համակարգ. Օդատար ուղիներ: Շնչափող:

Թոքեր: Զարգացումը, կառուցվածքը: Աերոհեմատիկ պատնեշ:

Մաշկը և նրա ածանցյալները. Մաշկի զարգացումը, կառուցվածքը: Մաշկի գեղձերը, ճարպագեղձեր, քրտնագեղձեր: Մազեր: Զարգացումը, կառուցվածքը: Եղունգներ: **Արյունաստեղծման և իմունոլոգիական պաշտպանության օրգանները.** Կառուցվածքը, դասակարգումը, զարգացումը: Ոսկրածուծ: Սաղմնային և հետսաղմնային հեմոպոեզ: Թիմուս նրա տարի-

քային և ակցիդենտալ հետզարգացումը: Ավշային հանգույցներ: Կառուցվածքը, դասակարգումը, զարգացումը: Փայծաղ: Փայծաղի անոթավորումը: **Մարդու սաղմնաբանություն.** Պրոգենեզ, արական և իգական սեռական բջիջների զարգացում: Էմբրիոգենեզ: Բեղմնավորում: Տրոհում: Գաստրուլյացիա: Արտասաղմնային օրգաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. С.Л. Кузнецов, М.К. Пугачев, Лекции по гистологии, цитологии и эмбриологии, Москва, 2009
2. Ю.И. Афанасьев, Н.А. Юрина, Гистология, цитология и эмбриология, Москва 2002
3. Т.Д. Селезенка, А.С. Мишин, В.Ю. Барсуков “Гистология”, М., 2010
4. В.Л. Быков Частная гистология, Санкт-Петербург, 1999
5. В.Л. Быков Функциональная морфология клеток и тканей человека, Санкт-Петербург, 2003
6. Гистология человека., Ленинград, 1989
7. Л.Г. Гарстукова, С.Л. Кузнецов, Наглядная гистология, Москва, 2008
8. Ա.Վ. Ազնաուրյան, Մ.Զ. Բախշինյան, Է.Լ. Թումանյան, Մասնավոր Հյուսվածաբանություն, Երևան, 2003
9. Ա.Վ. Ազնաուրյան, Մ.Զ. Բախշինյան, Է.Լ. Թումանյան, Հյուսվածաբանություն (ընդհանուր բաժին), Երևան, 2008
10. Կ.Թ. Սահակյան, Հյուսվածաբանություն, Երևան, 2013
11. Ա.Վ. Ազնաուրյան, Կ.Թ. Սահակյան, Ա.Զ. Ազնաուրյան, Ատլաս բջջաբանություն, սաղմնաբանություն, ընդհանուր հյուսվածաբանություն, Երևան, 2014
12. Ա.Վ. Ազնաուրյան, Կ.Թ. Սահակյան, Ա.Զ. Ազնաուրյան, Ատլաս Մասնավոր հյուսվածաբանություն, Երևան, 2014